

պիտանացու, քանի՞ եւս առաւել այսպիսի մեծ եւ հոգեւոր գործոյ ձեռնարկութիւն, ուր բազում կարեւոր պէտք էին¹ առաքինի արանց աւգնականութեան²: 4 Չի ոչ փոքր ինչ կասկած է՝ աներկիւղ այսպէս ումէք տալ³ զանձն յայսպիսի վաստակս, ուր պիտոյ են յարմարութիւնք բանից, որոշեալ կարգադրութիւնք ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն, բերել պատկառելով ստուգագրութիւն անպարսաւ յականջս իմաստասէր լսողաց. չաւելլով զանեղեալսն՝ յընդունայն աճմունսս բանից. չնուազեցուցանել զեղեալսն եւ կարճակտուր պատմել բանիւք անփութութեամբ. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն: 5 Եւ վասն զի են աստ պէտք բազում երկիւղագին պատրաստութեան⁴՝ արդ նպաստեալ⁵ իմում տկար խորհրդոյս՝ աղաչեմ, սատարեցէ՛ք ամենայն աղաւթասէր անձինք, ձերովք առ Աստուած խնդրուածովք աւգնականութեամբք: 6 Որովք արդարապատումն ճշգրտաբանեալ զեղեալ ի վեր քան զիս գործոյս հարկաւորութիւն՝ ընդ յորձանս մեծապատումն ծաւալացս նաւեալ մտաւոր ստուգաբանութեամբ՝ հասից բարեխաւսութեամբ սրբոց յանալէկոծ եւ յապահով նաւահանգիստն:

1 Ձ. նախ՝ պէտք են, ապա՝ ուղղած այսպէս

2 Ձ. օգնականութիւն

3 Գտ. ուրովք տալ

4 Ն. Բ. պատրաստութեան-ից յետոյ ենթադրում է պակասորդ:

5 Ձ. որք նաւաստեալ. Ատ. որք նպաստեալ. այսպէս ըստ ԲԳտ.